102.0031.120312

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

,,12,, 03 2012 Թ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 10212146

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

7 մարտի 2012 թվականի N 31-Ն

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ, ԴՐԱՆՔ ԿՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 26-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հարկադիր կատարողի համազգեստի, տարբերանշանների, խորհրդանշանի նկարագրերը, դրանք կրելու եւ հատկացնելու կարգը համաձայն NN 1, 2 հավելվածների:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի մարտի 1-ի «Հարկադիր կատարողի համազգեստի, ուսանշանների, տարբերանշանների, խորհրդանշանի նկարագրերը, դրանք կրելու եւ հատկացնելու կարգը հաստատելու մասին» N 26-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 1

ՀՀ արդարադատության նախարարի

2012 թվականի մարտի 7-ի

N 31-Ն հրամանի

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ

1. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ

1.1 Գլխարկը սեւ կտորից է, սեւ թավշյա գլխարկաբոլորքով, գլխարկագագաթի եւ գլխարկաբոլորքի եզրով ոսկեգույն (դեղնավուն), 2,5 մմ եզրաշերտով: Գլխարկաբոլորքի վրա երկու ոսկեգույն կոճակներով ամրացվում է ցանցահյուսազարդով երկշերտ հյուսված կապը (քուղը) եւ ոսկեգույն գլխարկանշանը: Գլխարկանշանը՝ ոսկեգույն, կաղնու տերեւներով երիզված ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության խորհրդանշանի պատկերով, ամրացվում է գլխարկի կենտրոնում: Գլխարկահովիարը սեւ է, լաքապատ:

Գեներալ-մայորի գլխարկահովիարի արտաքին մակերեսի վրա, առջեւի մասում, երկու կողմից ոսկեզօծ թելերով ասեղնագործվում են կաղնու ճյուղեր: Գլխարկահովիարից վերեւ՝ գլխարկաբոլորքի վրա, բացի ոսկեզօծ լարահյուսից եւ ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ձուլածո ոսկեզօծ խորհրդանշանից, ամրացվում (ասեղնագործվում) է կաղնու ճյուղերի տեսքով երկու համաչափ ոսկեկար զարդ: Գլխարկագագաթին ամրացվում է ՀՀ զինանշանը ոսկեզօծ գործվածքով:

Գեներալ-մայոր կոչում ունեցող աշխատակիցների համար տոնական գլխարկը պողպատագույն է, սեւ գլխարկաբոլորքով:

Պիլոտկա սեւ կտորից, բաղկացած է երկարացված հատակի 2 մասից, 2 պատից եւ կենտրոնական մասում իրար վրա ծալվող 2 փեշիկից: Վերծալված եզրակարերը դեղին, ձախ կողմում 3 օդանցք: Առջեւի կենտրոնական մասում ամրացվում է ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության խորհրդանշանը:

Կեպի բամբակյա սեւ կտորից, բաղկացած է թասակից եւ երկարացված գլխարկահովհարից: Երկու կողմից ունի օդանցքեր: Առջեւի կենտրոնական մասում ամրացվում է ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության խորհրդանշանը ոսկեգույն կաղնու տերեւներով երիզված:

1.2 Տարազաբաճկոն (Ձեւ 1 կցվում է): Արդարադատության լեյտենանտից-կապիտան կոչում ունեցող աշխատակիցների համար միակոճկուն է՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով 4 ոսկեգույն կոճակներով, մարմինը կիսագրկող, հարթ մակերեսներով, հետծալված օձիքով եւ սովորական երկկարանի թեւքերով, թիկնամասի ներքեւում՝ կտրվածքով: Տարազաբաճկոնը աջ եւ ձախ կողմերից ունենում է կափույրով ծածկվող կտրվածքով գրպաններ, իսկ կրծքի ձախ մասում՝ կտրվածքով գրպան: Արդարադատության մայորից-գնդապետ կոչում ունեցող աշխատակիցների համար՝ երկփեղկանի, երեք կոճականի տարազաբաճկոն, թիկնամասի ներքեւում՝ առանց կտրվածքի: Արդարադատության լեյտենանտից-գնդապետ տարազաբաճկոնի օձիքի վրա ամրացվում է Արդարադատության նախարարության խորհրդանշանը: Գեներալ-մայոր կոչում ունեցող աշխատակիցների ամենօրյա տարազաբաճկոնը կարվում է սեւ գույնի գաբարդինից:

Արդարադատության լեյտենանտից-գնդապետ կոչում ունեցող աշխատակիցներինը՝ սեւ կտորից է: Տարազաբաճկոնի օձիքը եւ թեւածալքերը՝ ոսկեգույն (դեղնավուն) եզրաշերտով է՝ 2,5 մմ լայնությամբ թեւածալքերի վրա երեք կոճակով:

Գեներալ-մայոր կոչում ունեցող աշխատակիցների համար կարվում է նաեւ տոնական տարազաբաճկոն՝ պողպատագույն գաբարդինից (Ձեւ 3 կցվում է): Գեներալ-մայորի տարազաբաճկոնի օձիքը եւ թեւածալքերը ոսկեգույն եզրաշերտով է 2,5 մմ լայնությամբ: Օձիքին եւ թեւածալքերին ոսկեզօծ թելով ասեղնագործված են կաղնու ճյուղեր:

Հանովի ուսադիրներով բաճկոնը (Ձեւ 1 կցվում է) սեւ գույնի կտորից է,

մետաքսյա աստառով: Առջեւի մասում կոճկվում է կայծակաճարմանդով (շղթա) 4 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով: Թիկնամասը եւ լանջափեշերը կրծքամասում եւ թեւքերը թեզանիքներով կտրվածքով, միացման տեղերով անցնում է 2,5 մմ լայնքով դեղին երիզ (կանտ), 2 ներկարված կողային գրպան: Բաճկոնի ուսերին տեղադրված են ուսադիրների ամրակներ, ուսադիրները հանովի: Գեներալ-մայորի բաճկոնի օձիքը դեղին 2.5 մմ եզրաշերտով է: Օձիքի վրա ասեղնագործվում է ոսկեզօծ թելերով կաղնու ճյուղեր (Ձեւ 3 կցվում է):

1.3 Ազատթող փողքերով տաբատը սեւ կտորից է, ուղիղ, առանց ծալքերի, ոսկեգույն (դեղնավուն) եզրաշերտով: Գեներալ-մայոր կոչում ունեցող աշխատակիցների համար տաբատի վրա եզրաշերտից 5 մմ հեռավորությամբ կարվում է նաեւ մուգ կարմրավուն վրակարվածք՝ 22 մմ լայնությամբ շերտով, տաբատի ողջ երկայնքով (Ձեւ 3 կցվում է):

1.4 Կոշիկները (կիսակոշիկները) սեւ են, քրոմակաշվե, իսկ գեներալ-մայոր կոչում ունեցող աշխատակիցներինը՝ այծակաշվե (շեւրոյե):

1.5 Վերնաշապիկը սպիտակ է, փափուկ կամ կոշտ օձիքով, երկար թեւքերով: Որպես ամառային համազգեստ բաճկոնի փոխարեն տրվում է վերնաշապիկ՝ երկար եւ կարճ թեւերով: Փողկապը սեւ է: Կարճ թեւքերով վերնաշապիկը կրվում է առանց փողկապի:

1.6 Կիսավերարկու աշնանային-ձմեռային (Ձեւ 2 կցվում է) սեւ անջրանցիկ (անջրաթափանց) կտորից, ուղիղ ուրվագծով, ձախ լանջափեշը 5 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով, հանվող տաք ներդիրով, որն ամրացվում է կայծակաճարմանդով, արհեստական մորթուց հանովի օձիքով եւ գլխանոցով: Թիկնամասը եւ լանջափեշերը կրծքամասում կտրվածքով: Միացման տեղով անցնում է 2.5 մմ լայնքով դեղին երիզ: Թեւքերը երկկարանի: Երկու լանջափեշի վրա թեք ներկարված գրպաններ: Աստառը մետաքսյա, ձախ կողմում ծոցագրպան: Գոտկատեղում եւ ներքեւում թաքնված գոտկապարան: Հանվող ուսադիրներով:

Կանանց համար տարազաբաճկոնի եւ կիսավերարկուի ձեւը նույնն է, կոճկվում է դեպի ձախ, տրվում են կիսաշրջազգեստ տաբատ եւ կոշիկներ:

Համազգեստի ձախ թեւքին կարվում է ծառայության խորհրդանշանը, աջ թեւքին՝

Հանրապետության դրոշը:

Գեներալ-մայոր կոչում ունեցող աշխատակիցները կրում են նաեւ երկփեղկանի վերարկու 3 զույգ ոսկեգույն կոճակներով, բնական կարակուլե օձիքով, թիկնամասի ներքեւում կտրվածքով, սեւ գույնի դրապից, իսկ տոնականը՝ կարվում է պողպատագույն կտորից: ՈՒսադիրները՝ կարվող: Վերարկուի օձիքը եւ լանջափեշերը 2.5 մմ դեղնավուն եզրաշերտով է (Ձեւ 3 կցվում է):

1.7 ՈՒսադիրները կրում են վերնաշապիկի, տարազաբաճկոնի, բաճկոնի, կիսավերարկուի եւ վերարկուի վրա: Օձիքների անկյունում (բացի վերնաշապիկից եւ բաճկոնից) տեղադրվում է Արդարադատության նախարարության խորհրդանշանը 30 մմ երկարությամբ, 20 մմ լայնությամբ:

2. ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԸ

Կոչումների տարբերանշաններ են ծառայում կիսափափուկ ուսադիրները (Ձեւ 4 կցվում է):

ՈՒսադիրն իրենից ներկայացնում է ձգված վեցանկյուն, երկարավուն զուգահեռ կողմերով, որի ներքեւի վերջնամասում ուղղանկյուն է, իսկ վերեւինը վերջանում է ստորին եզրին զուգահեռ բութանկյուն կտրվածքով: ՈՒսադրի երկարությունը 110-120 մմ է, լայնությունը՝ 40 մմ, իսկ գեներալ-մայորինը՝ 45 մմ է: ՈՒսադիրների եզրերը, բացի ստորինից, երիզվում են 2,5 մմ լայնությամբ, ոսկեգույն (դեղնավուն) մահուդե գործվածքով: ՈՒսադիրները պատրաստվում են սեւ գույնի գործվածքից, մահուդի աստառի վրա: Արդարադատության գնդապետի, փոխգնդապետի, մայորի ուսադիրները 2 ոսկեգույն (դեղնավուն) լուսաշերտով է, իսկ կապիտանի, ավագ լեյտենանտի եւ լեյտենանտի ուսադիրները 1 ոսկեգույն (դեղնավուն) լուսաշերտով:

2.1 ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐԻ ՈՒՍԱԴԻՐՆԵՐԸ

ՈՒսադիրները պատրաստվում են սեւ թելից հատուկ միահյուսվածքով, մահուդի

աստառի վրա՝ առանց լուսաշերտի (Ձեւ 5 կցվում է): Տոնական բաճկոնի համար՝ ուսադիրները ոսկեզօծ թելից են, եզրերը (բացի ստորինից) եւ աստղերը մուգ կարմրավուն եզրաշերտով: Վերնաշապիկի համար ուսադիրները պատրաստվում են ոսկեգույն թելերից:

Արդարադատության գեներալ-մայորի ուսադիրների վրա՝ 1 ուռուցիկ, ոսկեզօծ հնգաթեւ աստղ՝ 22 մմ տրամագծով, ներքեւի եզրագծից մինչեւ աստղի կենտրոնը՝ 45 մմ հեռավորությամբ: ՈՒսադիրների վերին հատվածում ոսկեզօծ թելերով գործվում է Արդարադատության նախարարության խորհրդանշանը:

ՈՒսադիրներն ամրացվում են մեկական ոսկեզօծ կոճակով:

2.2 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏԻ, ՓՈԽԳՆԴԱՊԵՏԻ, ՄԱՅՈՐԻ, ԿԱՊԻՏԱՆԻ, ԱՎԱԳ ԼԵՅՏԵՆԱՆՏԻ ԵՎ ԼԵՅՏԵՆԱՆՏԻ ՈՒՍԱԴԻՐՆԵՐԸ (Ձեւ 4 եւ 6 կցվում են)

2.2.1 Արդարադատության գնդապետի ուսադիրներին ամրացվում է 3 ոսկեգույն հնգաթեւ աստղ՝ 20 մմ տրամագծով (որոնցից 2-ը՝ լուսաշերտերի վրա, 1-ը՝ լուսաշերտերի մեջտեղում): Հեռավորությունը ներքեւի եզրագծից մինչեւ 2 աստղերի կենտրոնները՝ 30 մմ, 2 աստղերի կենտրոնները միացնող գծից մինչեւ 3-րդ աստղի կենտրոնը՝ 25 մմ:

2.2.2 Արդարադատության փոխգնդապետի ուսադիրներին ամրացվում է լուսաշերտերի վրա 2 ոսկեգույն հնգաթեւ աստղ՝ 20 մմ տրամագծով, հեռավորությունը ներքեւի եզրագծից մինչեւ աստղերի կենտրոնները 30 մմ:

2.2.3 Արդարադատության մայորի ուսադիրներին ամրացվում է 1 ոսկեգույն հնգաթեւ աստղ 20 մմ տրամագծով լուսաշերտերի մեջտեղում, ներքեւի եզրագծից մինչեւ աստղի կենտրոնը 45 մմ հեռավորությամբ:

2.2.4 Արդարադատության կապիտանի ուսադիրներին ամրացվում են 4 ոսկեգույն աստղ՝ 13 մմ տրամագծով (որոնցից 2-ը ներքեւի եզրագծից 30 մմ, լուսաշերտի երկու կողմերում՝ աստղերի կենտրոնների միջեւ 25 մմ հեռավորությամբ, 2-ը՝ լուսաշերտի վրա, աստղերի կենտրոնները միացնող գծից 25-ական մմ հեռավորության վրա):

2.2.5 Արդարադատության ավագ լեյտենանտի ուսադիրներին՝ 3 ոսկեգույն աստղ՝ 13 մմ տրամագծով (որոնցից 2-ը ներքեւի եզրագծից՝ 30 մմ, աստղերի կենտրոնների միջեւ 25 մմ հեռավորությամբ, 3-րդը՝ լուսաշերտի վրա, աստղերի կենտրոնները միացնող գծից 25 մմ հեռավորության վրա):

2.2.6 Արդարադատության լեյտենանտի ուսադիրներին՝ 2 ոսկեգույն աստղ՝ 13 մմ տրամագծով, ներքեւի եզրագծից՝ 30 մմ, աստղերի կենտրոնների միջեւ 25 մմ հեռավորությամբ:

ՈՒսադիրները կրում են վերնաշապիկի, տարազաբաճկոնի, բաճկոնի, կիսավերարկուի եւ վերարկուի վրա: Օձիքների անկյունում (բացի վերնաշապիկից) տեղադրվում է Արդարադատության նախարարության խորհրդանշանը 30 մմ երկարությամբ, 20 մմ լայնությամբ:

ՈՒսադիրներն ամրացվում են մեկական ոսկեգույն կոճակով:

Հանովի ուսադիրների վրա տեղադրվում է նաեւ Արդարադատության նախարարության խորհրդանշանը:

3. ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ

Ծառայության խորհրդանշանը էլիպսաձեւ է, երկարությունը 97 մմ, լայնությունը 85 մմ, կարվում է վերնաշապիկի, տարազաբաճկոնի, բաճկոնի, կիսավերարկուի եւ վերարկուի ձախ թեւքին՝ ուսակարից 70 մմ ներքեւ:

Խորհրդանշանը՝ ոսկեգույն արծիվ, որի մագիլների մեջ տեղադրված է կապտավուն գիրք բացված վիճակում, կշեռքի նժարների սպիտակ պատկերով: Հետին պլանում պատկերված է սպիտակ սուր: Պատկերը եզրազարդված է ստորին մասի ժապավենից մինչեւ արծվի թեւերի միջնամասը հասնող ոսկեգույն կաղնու տերեւներով: Արտաքին շրջանագծում ոսկեգույն տառերով գրված է.

«ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ - ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը:

Հավելված 2

ՀՀ արդարադատության նախարարի

2012 թվականի մարտի 7-ի

N 31-Ն հրամանի

Հարկադիր կատարողի համազգեստի հատկացման եւ կրման կարգը

Անվանումը	Քանակը	Կրման ժամկետը
1	2	3
1. Գեներալ-մայոր կոչում ունեցողների համար		
1. - գլխարկ՝ կարակուլե բնական մորթուց	1 հատ	5 տարի
2. - գլխարկ՝ սեւ	1 հատ	3 տարի
3. - գլխարկ՝ տոնական պողպատագույն	1 հատ	5 տարի
4. - վերարկու՝ ձմեռային կարակուլե օձիքով, սեւ	1 հատ	5 տարի
5. - վերարկու՝ տոնական պողպատագույն	1 հատ	5 տարի
6. - վերարկու՝ բրդյա, գարնանային-աշնանային	1 հատ	5 տարի
7. - տարազաբաճկոն՝ երկփեղկանի, սեւ գույնի գաբարդինից	1 հատ	3 տարի
8. - տարազաբաճկոն՝ երկփեղկանի, պողպատագույն տոնական	1 հատ	5 տարի

|_____|_____|_____|

|9. - բաճկոն՝ սեւ գույնի | 1 հատ| 3 տարի|

|_____|_____|_____|

|10. - բաճկոն՝ աշնանային-ձմեռային, սեւ, անջրանցիկ | 1 հատ| 3 տարի|

|կտորից | | |

|_____|_____|_____|

|11. - տաբատ՝ սեւ կտորից | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|12. - վերնաշապիկ՝ սպիտակ երկարաթեւ | 1 հատ| 1 տարի|

|_____|_____|_____|

|13. - վերնաշապիկ վրադիր՝ սպիտակ, երկար թեւերով | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|14. - վերնաշապիկ վրադիր՝ սպիտակ, կարճ թեւերով | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|15. - փողկապ՝ սեւ գույնի | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|16. - վզպատ թաշկինակ՝ սեւ գույնի | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|17. - վզպատ թաշկինակ՝ սպիտակ | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|18. - կոշիկ՝ սեւ, այծակաշվե (շեւրոյե) |1 զույգ| 2 տարի|

|_____|

| 2. Լեյտենանտից-գնդապետ կոչում ունեցողների համար |

|_____|

|1. - գլխարկ՝ բնական մորթուց սեւ գույնի (գնդապետինը՝ | 1 հատ| 5 տարի|

| կարակուլե) | | |

|_____|_____|_____|

|2. - գլխարկ՝ սեւ գույնի | 1 հատ| 3 տարի|

|_____|_____|_____|

|3. - կեպի՝ բամբակյա, ամառային սեւ կտորից | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|4. - պիլոտկա՝ սեւ կտորից (կանանց համար) | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|5. - տարազաբաճկոն՝ երկփեղկանի, սեւ կտորից (գլխավոր | 1 հատ| 3 տարի|

|խմբի համար) | | |

|_____|_____|_____|

|6. - տարազաբաճկոն՝ միակոճկուն, սեւ կտորից (առաջատար | 1 հատ| 3 տարի|

|խմբի համար) | | |

|_____|_____|_____|

|7. - բաճկոն՝ սեւ կտորից (հանովի ուսադիրներով) | 1 հատ| 3 տարի|

|_____|_____|_____|

|8. - կիսավերարկու (աշնանային, ձմեռային) սեւ, | 1 հատ| 3 տարի|

|անջրանցիկ կտորից, արհեստական մորթուց օձիքով | | |

|_____|_____|_____|

|9. - սվիտր՝ բամբակյա | 1 հատ| 3 տարի|

|_____|_____|_____|

|10. - տաբատ՝ սեւ կտորից | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|11. - կիսաշրջազգեստ (կանանց համար) | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|12. - վերնաշապիկ վրադիր, սպիտակ, երկար թեւերով | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|13. - վերնաշապիկ վրադիր, սպիտակ, կարճ թեւերով | 1 հատ| 2 տարի|

|_____|_____|_____|

|14. - փողկապ՝ սեւ գույնի | 1 հատ| 1 տարի|

|_____|_____|_____|

|15. - վզպատ թաշկինակ՝ սեւ գույնի | 1 հատ| 3 տարի|

|_____|_____|_____|

|16. - կոշիկ՝ սեւ (քրոմակաշվե) |1 զույգ| 2 տարի|

._____.

Խորհրդանշանը, գլխարկանշանը, ուսադիրները, աստղերը մեծ եւ փոքր, կոճակները մեծ եւ փոքր, երկշերտ հյուսված կապը (քուղը) տրվում են ծառայողական համազգեստի առարկաների քանակությանը համապատասխան, հաշվի առնելով կրման ժամկետները:

_____

ԻՐՏԵԿ - համազգեստների եւ ուսադիրների

Ձեւ 1 - Ձեւ 6 ձեւերը չեն բերվում